

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Էրասմուս+ շարժունության ծրագրի կողմից աջակցություն ստանալով՝ ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնը /Էկոկենտրոն/ 2019 թվականի մայիսին ծավալեց կրթական և վերապարտաստման ակտիվ գործունեություն Տուլայի համալսարանի հետ՝ իրականացնելով փորձի փոխանակում թե՛ ուսանողների, և թե՛ աշխատակազմի միջև: 2019 թվականի մայիսի 17-23-ին Էրասմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Էկոկենտրոնի ընդհանուր բաժնի վարիչ Դիանա Գևորգյանը և գլխավոր հաշվապահ Տարուշ Խահակյանը այցելեցին Տուլայի համալսարանի գնումների և ֆինանսական մասի համար պատասխանատու բաժիններ՝ ծանոթանալու այնտեղի գնումների և վճարման կարգի առանձնահատկություններին, ինչպես նաև կիսվելու սեփական փորձով:

Մայիսի 17-ին նրանք մասնակցեցին Տուլայի համալսարանում անցկացվող միջոցառմանը՝ նվիրված Հայաստանի և Վրաստանի համալսարանների միջազգային օրվան: Միջոցառման ընթացքում ելույթ ունեցան մի շարք դասախոսներ և ուսանողներ՝ ներկայացնելով իրենց ուսումնական հաստատությունները, հետազոտության ոլորտը և ծրագրի շրջանակներում ունեցած ձեռքբերումները:

Մայիսի 20-ին Դիանա Գևորգյանը և Տարուշ Խահակյանն այցելեցին Տուլայի համալսարանի գնումների բաժին և տեղի ադմինիստրատիվ աշխատակազմի հետ քննարկեցին գնման ընթացակարգի հետ կապված մի շարք առանձնահատկություններ՝ զուգահեռներ անցկացնելով հայկական և իտալական փորձի միջև: Դիանա Գևորգյանը՝ լինելով Էկոկենտրոնի գնումների մասով պատասխանատու, Տուլայի համալսարանի գնումների բաժնի պատասխանատուներին ուղղեց բազմաթիվ հարցեր գնումների ընթացակարգի ժամկետների վերաբերյալ և մանրամասնորեն ծանոթացավ ԵՄ-ում սահմանված գնման կանոնների հետ:



Ըստ վերոնշյալ ընթացակարգերի, Տուշայի համալսարանում իրականացվող ենթապայմանագրային ծառայությունները (subcontracting) պետք է համապատասխանեն ԵՄ-ի պետական գնումների կանոններին: Ճահառուն կարող է ենթապայմանագրային ծառայությունների դիմել մասնագիտական հմտություններ պահանջող հատուկ տեխնիկական ծառայությունների պարագայում: Այդպիսի մասնագիտական հմտությունների օրինակ են՝

- իրավական,
- հաշվապահական,
- հարկային,
- մարդկային ռեսուրսների,
- տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ ոլորտների հմտությունները:

Վերոնշյալ ծառայությունների դիմաց շահառուի կողմից կատարված ծախսերը կարող են համարվել իրավասու ծախսեր այն դեպքում, երբ նրանք բավարարում են դրամաշնորհի պայմանագրով կամ դրամաշնորհային որոշմամբ սահմանված բոլոր մյուս չափանիշներին:

Ֆինանսական գնահատման կամ աուդիտի դեպքում շահառուները պետք է կարողանան հիմնավորել հետևյալը՝

- պաշտոնական պայմանագրի առկայություն
- հայտարարված ծախսերը ճանաչելի են, ստուգելի են, և գրանցված են շահառույի հաշվառման համակարգում:

Եթե ծառայության արժեքը գերազանցում է 25.000 եվրոյի շեմը, ապա անհրաժեշտ են նաև մրցույթի ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթերը (պատճենները, հաշիվ-ապրանքագրերը): Այսպիսի դեպքերում շահառուները չեն կարող բաժանել սարքավորումների ձեռքբերումը ավելի ցածր գումարային արժեք ունեցող փոքր պայմանագրերի:

Դիանա Գևորգյանը Տուշայի համալսարանի գնումների բաժնի պատասխանատուներին հարցրել ուղղեց ապրանքների գնման պայմանագիրը կնքելու պայմանների վերաբերյալ: Տուշայի համալսարանի աշխատակազմը նշեց, որ եթե ծրագրի իրականացման համար պահանջվում է կատարել ապրանքների, աշխատանքի կամ ծառայությունների գնում (իրականացման պայմանագիր), ապա շահառուները պետք է պայմանագիր կնքեն տնտեսապես ամենաշահավետ առաջարկի

դեպքում: Այսինքն, պետք է ընտրեն այն տարբերակը, որն առաջարկում է լավագույն արժեքը սահմանված գումարի դիմաց կամ, անհրաժեշտության դեպքում, պետք է ընտրեն ամենացածր գինն առաջարկող տարբերակը, հաշվի առնելով, որ չկա շահերի բախում, և աուդիտի դեպքում բոլոր փաստաթղթերը պահպանվում են:

Հատկանշական է այն փաստը, որ եթե իրականացման պայմանագրի արժեքը գերազանցում է 60.000 եվրոն (կամ բարձրագույն կրթության ոլորտում Կարողությունների Չարգացման համար նախատեսված 25.000 եվրոն), ապա ազգային կամ գործադիր մարմինը կարող է շահառուի նկատմամբ սահմանել հատուկ կանոններ, որոնք սովորաբար հրապարակվում են ազգային գործակալությունների և գործադիր գործակալության օնլայն հարթակներում:

Մայիսի 21-ին, Դիանա Գևորգյանն ու Տարուշ Իսահակյանը այցելեցին Տուշայի համալսարանի ֆինանսական բաժինը: Հանդիպելով ֆինանսական բաժնի պատասխանատուների հետ՝ գլխավոր հաշվապահ Տարուշ Իսահակյանը ծանոթացավ վճարման ընթացակարգերի հետ: Հետաքրքիր էր պարզել, որ կախված <<Գործողության>> տեսակից, դրամաշնորհի պայմանագրի հաստատման տևողությունը և ֆինանսական միջևի գնահատումը, ինչպես նաև Էրասմուս+ ծրագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը ենթակա են վճարման տարբեր ընթացակարգերի: Բացառությամբ կանխավճարի, այլ վճարումները կատարվում են շահառուի կողմից ներկայացված հաշվետվությունների կամ վճարման պահանջների վերլուծության հիման վրա: Այդ փաստաթղթերի ձևաթղթերը տարվա ընթացքում տեղադրվում են ազգային գործակալությունների և գործադիր գործակալության օնլայն հարթակներում:



Տարուշ Իսահակյանը տեղեկացավ, որ Տուշայի Էրասմուս+ ծրագրի շրջանակներում կիրառվում են վճարման տարբեր ընթացակարգեր ներառյալ՝

- Կանխավճարի ընթացակարգ
- Չետագա վճարների ընթացակարգ
- Միջանկյալ/ընթացիկ հաշվետվություններ
- Հաշվեկշռի վճարում և վերականգնում
- Ֆինանսական տուգանքներ

Առավել մանրամասն քննարկվեց Էրասմուս+ ծրագրի շրջանակներում կիրառվող կանխավճարի ընթացակարգը: Ըստ այդ ընթացակարգի, կանխավճարը փոխանցվում է շահառուին վերջին երկու կողմերի ստորագրած օրվանից սկսած 30 օրվա ընթացքում կամ երբ դրամաշնորհի հաստատման որոշման մասին ծանուցվում է շահառուին և, անհրաժեշտության դեպքում, շահառուն ստանում է համապատասխան երաշխիքներ: Ազգային գործակալությունները կամ գործադիր գործակալությունը կարող են որոշել կանխավճարը բաժանել մի քանի ավելի մեծ չափի մարումների: Նրանք կարող են նաև կրճատել կանխավճարի չափը կամ ընդհանրապես չվճարել կանխավճար, եթե շահառուի ֆինանսական հնարավորությունները բավարար չեն համարվում:

Չետաքրքիր քննարկումներ ծավալվեցին նաև մի շարք կարևոր պայմանագրային դրույթների, մասնավորապես՝ ֆինանսական երաշխիքի վերաբերյալ: Օրինակ, եթե շահառուի ֆինանսական հնարավորությունները բավարար չեն համարվում, Ազգային կամ Գործադիր Գործակալությունը կարող է 60.000 եվրոն գերազանցող դրամաշնորհ ստացած շահառուից պահանջել նախապես երաշխիքի հայցադիմում տալ՝ կանխավճարի հետ կապված ֆինանսական ռիսկերը սահմանափակելու նպատակով: Այս երաշխիքի չափը կարող է հասնել մինչև իսկ կանխավճարի չափին:

Վերոնշյալ ֆինանսական երաշխիքը (եվրոյով) տրամադրվում է ԵՄ անդամ պետությունում տեղակայված հաստատված բանկի կամ ֆինանսական հաստատության կողմից: Երբ շահառուն գտնվում է ոչ ԵՄ երկրում, Ազգային կամ Գործադիր գործակալությունը կարող է համաձայնվել, որ այդ երկրում ստեղծված բանկը կամ ֆինանսական հաստատությունը երաշխիք տա, եթե այդ բանկը կամ ֆինանսական հաստատությունն ունի համարժեք ֆինանսական ապահովություն: Երաշխիքը կընձեռվի կանխավճարն աստիճանորեն վճարելուց հետո, համաձայն դրամաշնորհի պայմանագրի կամ դրամաշնորհի որոշման պայմանների: Եթե

հաշվեկշռի վճարումը ստանում է վերականգման ձև, ապա երաշխիքը կիրառարակվի շահառուին տեղեկացնելուց հետո:

Կարևոր է նշել, որ բացի ընթացիկ հարցերից քննարկվեցին նաև իտալական աշխատակազմի հետ հետագա համագործակցության հեռանկարները և ձեռք բերվեց պայմանավորվածություն առցանց միմյանց հետ կատարել անհրաժեշտ հմտությունների փոխանակում:



Դիանա Գևորգյան



Տարուշ Իսահակյան